

ՓՈՒՆԸՄԲՈՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

MEMORANDUM OF UNDERSTANDING

BETWEEN

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ,
«ԹՐՓԱՆՃԵԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ԵՎ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ

GOVERNMENT OF THE
REPUBLIC OF ARTSAKH,
“TURPANJIAN FAMILY FOUNDATION” AND
“AMERICAN UNIVERSITY OF ARMENIA” FUND

ք. Երևան

30.08.2019թ.

Yerevan

30.08.2019

Արցախի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ «Կառավարություն», ի դեմս Կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանի, մի կողմից, «Թրփանճեան ընտանեկան հիմնադրամը», այսուհետ՝ «Հիմնադրամ», ի դեմս Ջիրայր Հակոբ Թուրփանջյանը, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, և «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամը, այսուհետ՝ «Համալսարան», ի դեմս նախագահ Կարին Մարկիդեսի, որը գործում է Համալսարանի կանոնադրության հիման վրա, երրորդ կողմից, բոլորը միասին այսուհետ՝ «Կողմեր»,

The Government of the Republic of Artsakh, hereinafter referred to as “Government”, represented by Narine Aghabalyan, Minister of Education, Science and Sport, on one side, the “Turpanjian Family Foundation”, hereinafter referred to as “Foundation”, represented by Gerar Hagop Turpanjian, acting on the basis of the charter, on the other side, and the “American University of Armenia” Fund, hereinafter referred to as “University”, represented by Karin Markides, President, acting on the basis of the charter of the University, on the third side, all the parties collectively hereinafter referred to as “Parties”,

Գիտակցելով Արցախի պետական համալսարանում (ԱՊՀ) ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման և կիրառման անհրաժեշտությունը,

Realizing/being aware of the need for inputting and implementing modern information and communication technologies in Artsakh State University (ASU);

Նպատակ ունենալով վերակառուցել Արցախի պետական համալսարանը ու համապատասխանեցնել այն միջազգային չափանիշներին և Արցախի սոցիալ-տնտեսական զարգացման կարիքներին,

Having the intention to reconstruct Artsakh State University and conform it to the international standards and the needs of the social-economic development of Artsakh,

Վստահ լինելով, որ այս համագործակցությունը լայն հնարավորություններ կընձեռի ինչպես Արցախի Հանրապետության կրթության որակի զարգացման, այնպես էլ Հայաստանի Հանրապետության և Արցախի միջև կապերի ամրապնդման համար,

Having the assurance that this collaboration will provide broad opportunities both for developing the education quality in the Republic of Artsakh, and strengthening the relations between the Republic of Armenia and Artsakh;

Հաշվի առնելով, որ Հիմնադրամը պատրաստակամություն է հայտնել ոչ ավել քան 50%-ի (հիսուն տոկոս) չափով ֆինանսավորելու սույն փոխըմբռնման հուշագրով (այսուհետ նաև «Հուշագիր») նախատեսված ծրագրերը,

Whereas The Foundation has expressed readiness to finance not more than the 50% (fifty percent) of the total cost of the implementation of the projects envisaged in the present memorandum (hereinafter referred to as “Memorandum”);

Համալսարանը պատրաստակամություն է հայտնել աջակցել սույն Հուշագրով նախատեսված Ծրագրի իրականացման հարցում,

Կառավարությունը պատրաստակամություն է հայտնել ոչ պակաս, քան 50%-ի (հիսուն տոկոս) չափով ֆինանսավորել սույն Փոխըմբռնման Հուշագրով նախատեսված դրույթներն իրագործելու նպատակով,

կնքեցին սույն Հուշագիրը հետևյալի մասին.

Հոդված 1. Աշխատանքային խմբի ձևավորումը և նպատակները

1.1. Կողմերը պարտավորվում են ձևավորել աշխատանքային խումբ՝ ղեկավարելու Ծրագիրը՝ ըստ նախապես մշակված մեթոդաբանության և Համալսարանի կողմից հաստատված ճարտարապետաքաղաքաշինական ծրագրերի:

1.2. Աշխատանքային խմբում ներգավվելու նպատակով Կողմերից յուրաքանչյուրը կառաջարկի մեկ լիազոր ներկայացուցչի՝ նախագծի ընթացքը և գործադրությունը (commissioning) իրականացնելու նպատակով: Նշված ներկայացուցիչների հանդիպումները և կայացված որոշումները պարտադիր են սույն նախագծի շրջանակներում երրորդ անձանց հետ կնքված պայմանագրերի կատարման ընթացքում: Նշված հանդիպումները կկկայանան ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս քան ամիսը մեկ անգամ: Սույն Հուշագրի շրջանակներում երրորդ անձանց հետ պայմանագիր են կնքում հետևյալ կերպ՝

- Կառավարությունը հայտարարում է մրցույթ, որում նշվում են մրցույթի անցկացման ժամկետները և պայմանները:
- Մրցույթը պետք է բաղկացած լինի երեք փուլից: Առաջին փուլի ընթացքում ընդունվում են մրցույթի մասնակցության հայտերը, երկրորդ փուլի ընթացքում ընտրվում են առնվազն երկու լավագույն ընկերությունները (անձինք), իսկ երրորդ փուլում ընտրվում է հաղթողը:
- Մրցույթի հաղթողին ընտրում է աշխատանքային խումբը:
- Մրցույթում հաղթող ճանաչված իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց հետ պայմանագիր է կնքում Կառավարությունը:
- Հուշագրի 2.1.2 ենթակետում նշված գումարի գերազանցման պարագայում նոր պայմանագրեր կնքելու անհրաժեշտության դեպքում այդ պայմանագրերը կնքում է

the University has expressed readiness to support the implementation of the Program envisaged in this Memorandum;

the Government has expressed readiness to finance the implementation of the points stipulated in this Memorandum of Understanding in the minimum amount of 50% (fifty percent) of the total cost;

have signed the present Memorandum on the following:

Article 1. Development and objectives of the work group

1.1. The Parties shall set up a work group to manage the Program in accordance with initially developed methodologies and the architectural-construction plans developed by the University.

1.2. Each party will suggest one authorized representative to be included in the work group, in order to oversee the progress and commissioning of the project. During the execution of contracts with third parties, the mentioned representatives shall be obliged to have meetings and make respective decisions. Such meetings shall be held when the need arises but no less than once a month. Contracts with third parties shall be signed within the framework of this Memorandum in the following manner:

- The Government shall announce a bidding specifying the terms and conditions therein;
- The bidding shall comprise three phases. Applications shall be submitted during the first phase, two best companies (individuals) shall be selected during the second phase, and the winner shall be selected during the third phase;
- The work group shall select the winner of the competition.
- The Government shall sign a contract with the winning legal and (or) physical entity.
- In the case of exceeding the amount specified under point 2.1.2. of the Memorandum, should the need arise to sign new contracts,

<p>Կառավարությունը՝ սույն կետով սահմանված կանոնների համապատասխան:</p> <p>Հոդված 2. Կողմերի պարտականությունները</p> <p>2.1. Սույն Հուշագրով սահմանված նպատակներն իրագործելու նպատակով Կողմերը համաձայնության եկան հետևյալ կերպ.</p> <p>2.1.1. Համալսարանը պարտավորվում է՝</p> <p>1) աջակցել Ծրագրի իրագործմանը հետևյալ ոլորտներում.</p> <ul style="list-style-type: none"> • Նոր գրադարանային կառավարման համակարգի ստեղծում և նոր ժամանակակից գրադարանի նախագծում • Մարդկային ռեսուրսների կառավարում • Վերանորոգումից հետո շենքի շահագործման պլանի կազմում • Համալսարանի կառավարման (վերահսկման) պլանի կազմում • Համալսարանում նոր տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգի տեղադրում • Նոր ճաշարանի սկզբնական նախագծում • Կենտրոնացված ուսանողների գրանցման գրասենյակի ստեղծում • Կենտրոնացված լսարանների գրանցման համակարգի ներդնում • Կենտրոնացված անվտանգության համակարգի ներդնում • Առանձին դասախոսական սենյակների նախագծման խորհրդատվություն • Լսարանների և դահլիճների նախագծման խորհրդատվություն • Ուսանողների առաջադիմության կենտրոնի նախագծման խորհրդատվություն • Օդափոխության համակարգի ներդնում (օդափոխություն, օդորակում) • Ուսանողների խմբակային աշխատանքների համար նախատեսված բաց տարածքի նախագծում (համակարգչային լաբորատորիաներ, և այլն) <p>2) ԱՊՀ-ի տարածքում հիմնել Համալսարանի Բաց կրթություն ծրագրի Արցախյան մասնաճյուղ/գրասենյակ, որը կներառի ՀԱՀ-ի կիրառական լեզվաբանության հետազոտական կենտրոնը (CRAL), Անգլերենի արտադպրոցական ծրագիրը (EEC) և Թրփանձեան շարունակական կրթական ծրագիրը (CEP):</p>	<p>the Government shall sign those contracts as defined by the rules set forth in his point.</p> <p>Article 2. Responsibilities of the Parties</p> <p>2.1. The Parties agree to implement the objectives set forth in this Memorandum as follows:</p> <p>2.1.1 The University shall:</p> <p>1) support the implementation of the Program in the following fields:</p> <ul style="list-style-type: none"> • Implementing a new library management system and designing of a new contemporary library; • Human resource management; • Setting up the Operation Plan of the facilities after the renovation • Setting up the Management/Maintenance plan of the University • Setting up a new informational technologies system in the University • Setting up a new cafeteria concept • Setting up a centralized Registrar’s Office • Setting up a centralized classroom booking system • Setting up a centralized security system • Advising on designing separate faculty offices • Advising on designing classrooms and auditoriums • Advising on setting up a Center for Student Success • Setting up a ventilation system (ventilation, air conditioning) • Open space collaborative study area for students (computer labs, etc.) <p>2) Establish an AUA Open Education Program Artsakh branch office in the ASU area to include AUA’s Center for Research in Applied Linguistics (CRAL), EEC Afterschool English Program, and Turpanjian Continuous Education Program (CEP).</p>
--	---

2.1.2. Հիմնադրամը պարտավորվում է աջակցել Օրագրի իրագործմանը հետևյալ կերպ.

- 1) Ֆինանսավորել Օրագիրը՝ 2,500,000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ԱՄՆ դոլարին համարժեք դրամի շրջանակներում: Եթե Օրագրի իրականացման ծախսերը գերազանցեն նշված գումարը, ծախսերի գերազանցող մասը կֆինանսավորվի Կառավարության կողմից:
- 2) Սույն Օրագրի իրագործման նպատակով անհրաժեշտության դեպքում ինքնուրույն կնքել համապատասխան պայմանագրեր:

2.1.3. Կառավարությունը պարտավորվում է՝

- 1) իր իրավասության շրջանակներում աջակցել սույն Օրագրի իրագործմանը՝ ներառյալ Արցախի պետական համալսարանում շինարարական, վերանորոգման և տեխնիկական վերազինման աշխատանքներին,
- 2) Հուշագրի 2.1.2 կետում նշված դեպքում, երբ Կառավարությունը կիրականացնի Օրագրի ֆինանսավորումը ոչ պակաս, քան 50%-ի չափով, ապահովել Կառավարության անունից կնքվող պայմանագրերով իրականացվելիք աշխատանքների և մատուցվելիք ծառայությունների օրինականությունն ու որակը,
- 3) ողջամիտ ժամկետում պատասխանել Հիմնադրամի և Համալսարանի գրավոր և բանավոր դիմումներին, ծանուցումներին և այլ հաղորդագրություններին:
- 4) ապահովել, որպեսզի շինարարական և տեխնիկական վերազինման աշխատանքների ավարտից հետո Արցախի պետական համալսարանի առաջին հարկում տեղակայվի Համալսարանի Բաց կրթության ստորաբաժանման Արցախի մասնաճյուղը, որը, ի լրումն Արցախում իրականացվող կրթական ծրագրերի, կիրականացնի կրթական և վերապատրաստման կարճաժամկետ հավաստագրային ծրագրեր:
- 5) իր իրավասության սահմաններում աջակցել Համալսարանի Բաց կրթության ստորաբաժանման Արցախի մասնաճյուղի բնականոն գործունեությանը:

Հոդված 3. Ծանուցում

Բոլոր ծանուցումները, պահանջները, խնդրանքները, հրաժարումները կամ այլ հաղորդագրությունները, որոնք կարող են ներկայացվել կամ պահանջվում է ներկայացնել, կամ ուղարկվել Կողմերից որևիցե

2.1.2. The Foundation shall support the implementation of the Program in the following manner:

- 1) sponsor the Program within the framework of 2,500,000 (two million five hundred thousand) US dollars. Should the Program implementation costs exceed the specified amount, the funds for the exceeded portion shall be provided by the Government;
- 2) when the need arises, sign respective contracts independently for the purpose of the implementation of this Program;

2.1.3. The Government shall

- 1) support the Program implementation within the realm of its authorities, including construction, renovation and technical equipping works in Artsakh State University;
- 2) in the case specified under Point 2.1.2 of the Memorandum, when the Government provides the funding for the Program implementation with the minimum amount of 50%, ensure the quality of the works and services envisaged in the contracts signed on behalf of the Government;
- 3) respond to the written and oral inquiries, notifications and other messages of the Foundation and the University within reasonable timelines;
- 4) ensure setting up the Artsakh branch of the University's Open Education office on the first floor of Artsakh State University once the construction and technical equipping works are completed, which, in addition to the educational programs implemented in Artsakh, shall conduct short-term educational and training certification programs;
- 5) support the smooth operation of the University's Open Education Program Artsakh Branch within the realm of its authorities.

Article 3. Notices and notifications

All the notifications, claims and requests, refusals or other messages that can be presented or are required to be presented or sent from one the Parties to the other, shall be made in writing, as required by the

մեկից մյուսին՝ համաձայն սույն Հուշագրի պետք է լինեն գրավոր, հայերեն լեզվով և պետք է համարվեն պատշաճ կերպով հանձնված կամ ուղարկված՝ առձեռն ներկայացվելու, կամ Կողմերի կողմից սույն Հուշագրում նշված էլեկտրոնային հասցեով, կամ գրանցված կամ պատվիրված, կանխավճարված նամակագնով, փոստային ծառայությամբ առաքվելու դեպքում, սույն Հուշագրում ներկայացվող հասցեներով:

Հոդված 4. Այլ դրույթներ

1. Սույն Հուշագիրը կնքված է հայերեն և անգլերեն լեզուներով, 3 (երեք) օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Մեկնաբանման ընթացքում որևէ տարաձայնության ընթացքում գերակայում է հայերեն տեքստը:
2. Կողմերը հավաստում են, որ սույն Հուշագիրը հնարավոր է ամբողջությամբ չարտացոլի իրենց միջև համագործակցությանը վերաբերող բոլոր դրույթները և դրանք, ինչպես նաև սույն Հուշագրում ամրագրված դրույթների իրականացումը (եթե դրանք ուղղակիորեն հնարավոր չէ իրականացնել), ենթակա են հետագա քննարկման և, անհրաժեշտության դեպքում, գրավոր ձևակերպման:
3. Կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում սույն Հուշագրին առնչվող իր գործողությունների և անգործության համար:
4. Սույն Հուշագիրը մեկնաբանվում և կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:
5. Սույն Հուշագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվության են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6. Սույն Հուշագրի հետ կապված բոլոր վեճերը Կողմերը կձգտեն լուծել բանակցությունների միջոցով: Կողմերից յուրաքանչյուրն առավելագույնս հաշվի կառնի մյուս Կողմի առաջարկությունները: Կողմերի կողմից համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

present Memorandum, in Armenian language and shall be considered properly submitted and sent if they are presented person or by the email address specified by the Parties in this Memorandum, or via registered or ordered prepaid mail service to the addresses specified in this Memorandum.

Article 4. Other provisions

1. This Memorandum is signed in Armenian and English languages in 3 (three) copies, which are legally equal and authentic. Each party shall get one copy. In the case of any divergence of interpretation the Armenian text shall prevail;
2. The Parties confirm that the Present Memorandum may not fully reflect all the points referring to their collaboration, as well as the implementation of all the points (if it is straightforwardly impossible to complete them), are subject to further discussion and if necessary, to written formulation;
3. Each of the Parties shall bear responsibility for the actions and inactions with regard to this Memorandum;
4. This Memorandum shall be interpreted and regulated in accordance with the legislation of the Republic of Armenia;
5. In the cases not envisaged by this Memorandum, the Parties shall bear responsibility for not executing their obligations as prescribed by the RA legislation.
6. All the disputes with regard to this Memorandum, shall be settled through negotiations. Each of the Parties shall at its best consider the suggestions of the other Party. In case of not reaching an agreement, the disputes shall be solved through the courts.

<p>7. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել սույն Հուշագիրը իր մտադրության մասին մյուս Կողմերին առնվազն 30 (երեսուն) օր առաջ նախապես գրավոր ծանուցելով: Սույն կետով նախատեսված դեպքերում, Կողմերն ընդունում են, որ պետք է ձեռնարկվեն բոլոր միջոցները, որպեսզի Հուշագրի դադարեցումը որևէ կերպ չազդի դրանով արդեն իսկ ստանձնած պարտավորությունների վրա, որոնք Հուշագրի լուծման պահին դեռևս ամբողջությամբ կատարված չեն:</p> <p>8. Արցախի պետական համալսարանի շինարարության/վերանորոգման աշխատանքային գծագրերը կցվում են սույն Հուշագրին և կազմում են դրա անբաժանելի մասը:</p> <p>9. Սույն Համաձայնագրի բոլոր փոփոխությունները և (կամ) լրացումները վավեր են, եթե ստորագրված են Կողմերի կամ նրանց ներկայացուցիչների կողմից:</p> <p>10. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի սույն Հուշագրով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումը:</p>	<p>7. Each Party has the right to terminate this Memorandum by notifying the other Parties of its intention in writing, 30 (thirty) days in advance. In the cases envisaged by this point, the Parties admit that all the measures need to be taken in a manner that the termination of this Memorandum does not in any way affect the responsibilities already undertaken therein, which have not been fully executed at the time of the termination of the Memorandum.</p> <p>8. All the construction/renovation working plans of Artsakh State University shall be attached to this Memorandum and shall be considered its integral parts.</p> <p>9. All the changes and (or) amendments to this Memorandum shall be valid if they are signed by the Parties or their representatives.</p> <p>10. The present Memorandum shall enter into force from the moment of its signing and shall remain in force until the full execution of all the responsibilities as assigned to the Parties by this Memorandum.</p>
---	---

<p>Կողմերի հասցեները և ստորագրությունները Կառավարության անունից՝</p> <p>Նարինե Աղաբալյան Արցախի Հանրապետության Կրթության, գիտության և սպորտի նախարար</p>	<p>Addresses and signatures of the Parties: for the Government:</p>  <p>Narine Aghabalyan, Minister of Education, Science and Sport, Republic of Artsakh</p>
<p>Հիմնադրամի անունից՝</p> <p>Ջիրայր Հակոբ Թուրփանջյան «Թրփանճեան ընտանեկան հիմնադրամ»</p>	<p>for the Foundation:</p> <p>Gerar Hagop Turpanjian “Turpanjian Family Foundation”</p>
<p>Համալսարանի անունից՝</p> <p>Նախագահ՝ Կարին Մարկիդես «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամ</p>	<p>for the University:</p> <p>Karin Markides, President “American University of Armenia” Fund</p>